

ԼԻԱ ԲԱԼԱԳՅԱՆ

ժողովրդական հեքիաթ

Ես ուզում եմ տիրանալ
այնպիսի գանձի, որ ամեն ինչ է,
ես ցանկանում եմ՝
ջահելություն...

Ֆաուստ

ՈՍԿԵՓԵՏՈՒՐ ԹՈՉՆԱԿԸ

Ապրում էր մի ծերուկ իր պառավի հետ, այնքան երկար ժամանակ, որ կորցրել էր տարիների հաշիվը: Գուցե դա հիսուն տարի ու հինգ օր էր, չէր հիշում ծերուկը: Բայց, երբ նայում էր իր պառավին, զարմանում էր, թե ինչպես երայի նման անցան-գնացին երիտասարդական օրերը: Դեռ երեկ էր, որ պառավը մի սիրուն, կարմրաթուշ ու վառվռուն աչքերով, թվռան աղջիկ էր: Աշխարհի գործն աշխուժորեն կատարում էր, լվանում-թափում, թխում-եփում և դեռ ժամանակ էլ էր գտնում ուրախանալու, սիրելու ու սիրվելու համար:

– Յե՛յ, գիտի աշխարհ,– ափսոսանքով քթի տակ փնփնթում էր ծերուկը,– ջահելությունը են կախարդական թռչունի նման է, որ ձեռքիցդ բաց թողիր, էլ ետ չի գա:

Կնոջ դեմքը ծերությունից ծռվել էր, կնճռոտվել, աչքերը փոս էին ընկել, մազերը ցանցառել: Վեր կենալիս տնքում էր՝ կողը բռնած քայլելիս կաղում էր ու հազիվ շարժվում. «Մարդ չի ուզում վրեն նայի, – մտածում էր ծերուկը, – դեռ դա ոչինչ, գործ անել էլ չի կարողանում»: Ապրում էին նրանք անտառի եզրին մի փոքրիկ ու խարխլված տնակում, կոտրված տաշտակի մեջ անլվա շորերը հավաքվել դեզ էին կապել, տունը մրոտ ու աղտոտ, պատուհաններն անլվա, տանը ոչ հաց կար, ոչ տաք կերակուր: Միայն պառավ կնիկը փնփնթում էր ու տնքտնքում, ինքն իր հետ կռվում, ինքն իր հետ էլ չէր հաշտվում:

Պառավն իր հերթին աչքի ծերով նայում էր ծերուկ ամուսնուն ու զարմանում, թե ո՞ր կորավ են ջահել-ջիվան տղամարդը, որ փետը մի շնչով էր կտրում, դաշտ էր գնում, մի ամբողջ դեզ շալակած հետն էր բերում, վարում էր, ցանում, հնձում ու կալսում, անասուններին տեր կանգնում: Հոգնելն ինչ էր, չէր

իմանում: Իսկ հիմա, կռացել է խեղճ ծերուկը, ոտքերը ծռվել են, շունչը խզզոցով է դուրս գալիս կրծքից, իսկ երբ հազը բռնում է, քիչ է մնում տեղն ու տեղը շունչը փչի:

– Անցան-գնացին մեր կանաչ-կարմիր օրերը, – տխուր բարբաջում էր պառավ կինը, – քանց մեռնելն ուրիշ բան չի մնացել անելու, ժամը հասել է:

Ծերուկը դաշտում աշխատել չէր կարողանում, օրվա ապրուստը հայթայթելու համար գնում էր մոտակա անտառը, թակարդ էր լարում, մի թռչուն կամ մի որևիցե նապաստակ էր բռնում, բերում էր տուն: Կնիկը տնքտնքայլով ճաշ էր պատրաստում, ուտում էին, դեպի երկինք նայում.

– Շնորհակալ ենք, Տեր Աստված, – իրենց գոհունակությունն էին արտահայտում, իսկ եթե թակարդը ոչ մի կենդանի արարած չէր ընկնում, սև հաց էին կրծում, էլի Աստծուն փառք տալիս:

Օրերից մի օր, ծերուկը իր սովորության համաձայն անտառ էր գնացել, մոտեցել էր թակարդին և ի՞նչ տեսնի՝ մի սիրունիկ ոսկե թռչնակ, թարտում է թակարդի կապանքների մեջ:

– Է՛հ, սիրուն թռչնակ, դու ինձ պետք չես, քանի օր է ոչինչ չենք կերել ես ու պառավս, քաղցած ենք, ավելի լավ չէ՞ր լինի, դու մի նապաստակ կամ լոր լինեիր, – ինքն իրեն խոսեց ծերուկը: – Հիմա քեզ ի՞նչ անեն, ոչ միս ունես, ոչ էլ հաց ես, որ ուտենք: Հենց այս խոսքերի վրա, հանկարծ ծերուկի աչքերը լայն բացվեցին ու ձեռքերը սկսեցին դողդողալ:

– Պապիկ ջան, բարի պապիկ, բաց թող ինձ, թռչեմ-գնամ իմ երամը, ես քո լավության տակ չեմ մնա, ինչ սիրտդ ուզի՝ կտամ, – քնքուշ ձայնով երգեց ոսկեփետուր թռչնակը:

Ծերուկը հիսուն տարի և հինգ օր որսորդություն էր արել, բայց այդպիսի խոսող թռչնակի երբեք չէր հանդիպել:

– Դու ինձ ի՞նչ կարող ես տալ, – ասաց բարի ծերուկը, – ձեռքերս թուլացել են, ոտքերիս մեջ ուժ չկա, աչքերիս առաջ սև պիծակներ են թռչում, ինձ էլ ոչ մի բան պետք չէ, թռի-գնա կապույտ երկինք, սիրուն թռչնակ, Աստված քեզ հետ:

Ու ծերուկը բացեց թակարդի դռնակը, թռչունը թռավ-նստեց ծառի ճյուղին և ասաց.

– Պապի՛կ, պապի՛կ, բարի՛ պապիկ, եթե քեզ մի բան պետք լինի, արի այս ծառի տակ կանգնիր ու երեք անգամ կանչիր. «Ծըլնգ, մըլնգ, իմ սիրուն թռչնակ, թռի-արի ու ինձ օգնի, և ես կգամ քամու ուժով, հավքի թևով ու քեզ կօգնեմ ամեն ինչով, ես թռչունների արքայի միակ աղջիկ-թռչնակն եմ», – ասաց ոսկե փետրավորը, երեք անգամ պտտվեց ծերուկի շուրջը, բարձրացավ կապուտակ երկինք ու անհետացավ ամպերի մեջ:

Ծերուկը զարմանքից բերանը բաց, երկար նայեց թռչնակի հետևից, ձեռքով հրաժեշտ տվեց, ճմրթված գլխարկը դրեց գլխին ու դափ-դատարկ բռնեց տան ճանապարհը: Գնում էր ու տխուր մտածում. «Էսօր էլ սոված-ծարավ կմնանք, պառավս ինձ տնից դուրս կանի»: Այս մտքերով ծերուկը մոտեցավ իրենց խարխուլ տնակին: Պառավը նստած չոր կոճղին անհամբեր իրեն էր սպասում: Սովից աչքերը սևացել էին ու ձեռքերը թուլացել, բայց երբ տեսավ դատարկածեռն ծերուկին, սկսեց երգելով բողոքել իր սև բախտից: Ծերուկը խեղճ-խեղճ նստեց պառավի կողքին, և նրան մխիթարելու համար սկսեց պատմել անտառում իրեն հանդիպած ոսկեթևիկ հրաշք թռչունի մասին: Պառավը դեռևս երգելով դարդերն էր պատմում ու լաց լինում, հանկարծ կանգ առավ ու շնջաց.

– Կախարդական թռչուն՞ն, ի՞նչ ասաց նա:

– Ղե՛, ասում էր, բաց թող ինձ, ես քեզ այդ բանի համար շնորհակալ կլինեմ, ինչ ուզես կտամ ու քո լավության տակից դուրս կգամ, – քնծիծաղ տվեց ծծերուկն ու ավելացրեց, – թռչունն ի՞նչ ուժ ունի, որ ինչ էլ տա: Ես նրանից ոչինչ չուզեցի, բաց թողեցի, որ գնա իր կապուտակ երկինքը:

Պառավը հանկարծ քարացավ, հետո զարմանալի աշխույժով վեր թռավ տեղից ու ճչաց.

– Հիմար ծերուկ, տխմարի մեկը, սոված-ծարավ նստել եմք, չկարողացա՞ր թռչնից մի բան ուզել:

– Թռչունը ի՞նչ, նրա զորությունը ի՞նչ...

Պառավը զայրացած ձեռքի փայտով բռեց ծերուկին և ասաց.

– Խելք հավաքիր, հիմար հալևոր, վաղը առավոտյան կգնաս անտառ ու թռչունից կուզես...

– Ի՞նչ, – թոթվեց ծերուկը, – ի՞նչ ես ուզում, որ խնդրեմ թռչունից:

– Վաղը կասեմ, – ուռած-փքված ասաց պառավը, փեշերը քշտեց, շտապ գնաց մտավ անկողինը, փաթաթվեց պատառոտված վերմակի մեջ ու տեղն ու տեղը խոնփացրեց:

Առավոտ ծեփին պառավն արթնացավ, աչքերը ճպճպացրեց. «Միգուցե երագ էր», – մտածեց նա, բայց անմիջապես էլ ինքն իրեն գտավ, մոտեցավ ծեր ամուսնուն, որը վառարանի կողքին դրված դախտի վրա խորը քնած էր ու երագուն խորոված էր տեսնում, հետն էլ չամիչով փլավ ու տեսակ-տեսակ խորտիկներ: Պառավը մի լավ թափ տվեց քնի մեջ ժպտացող ամուսնուն ու վրայից մի կողմ քաշեց նախշավոր վերմակը: Ծերուկը հանկարծակիի եկած վեր թռավ տեղից ու նստեց թախտին:

– Շուտ վե՛ր կաց, անգետ հալկոր, – գոռաց պառավը, – գնա անտառ, կանգնի՛ր ծառի տակ ու կանչի՛ր էդ ոսկեփետուր թևավորին, – պառավը շունչ քաշեց, մտածեց ու շարունակեց, – ասա, որ մի կնիկ ունես՝ հուրի-փերի, բայց հիմա պառավել ա, սովից աչքերը սևացել են, բայց ոչ հաց ա ուզում, ոչ խորոված, ոչ տուն ու տեղ, ոչ հարստություն:

– Բա ի՞նչ, – զարմացավ ծերուկը:

– Չոռ ու ցավ քեզ, – թնդաց պառավ կնիկը:

– Չոռ ու ցավ ի՞նչ, – էլ ավելի զարմացավ ծերուկը:

– Տասը տարի ջահելություն եմ ուզում, – վրա տվեց պառավը, – չե՞ս հասկանում, անգետ հալկոր:

– Հա՛, ջահելանա՛լ, – աչքերը չռեց ծերուկ ամուսինը:

– Հենց քո ասածն է, տասը տարի ջահելություն, – համառեց պառավն ու ծերուկի մեջքը թակելով, դուրս արեց տնից:

Գնաց պապիկը բեղերը կախ, ամոթից քթի տակ փնթփնթալով, բայց ի՞նչ անի, ուրիշ ճար չկար: Գնաց, գնաց, գտավ էն ծառը, կանգնեց դրա տակ, գլխարկը հանեց արևից վառված ճաղատ գլխից ու ծերունական խզված ձայնով, երեք անգամ կանչեց.

– Ծըլնգ-մըլնգ, իմ սիրուն թռչնակ, թռի-արի մի ճար արա իմ խեղճ գլխին:

Ծերուկն այս խոսքերն ասեց-չասեց, գլխավերևից լսվեց թռչունի թևերի թրթռոցը: Գլուխը վեր բարձրացրեց ու տեսավ սիրունիկ ոսկեթևիկ թռչնակին.

– Պապի՛կ, պապի՛կ, բարի՛ պապիկ, ի՞նչ ես էդպես տխուր-տրտում, գլխամուկոր կանգնել այստեղ, ի՞նչ հոգսեր են քեզ տանջում, – մարդկային քնքուշ ձայնով խոսեց թռչնակը:

– Ոսկեփետուր իմ սիրունիկ, – ասաց պապիկը և խորը գլուխ տվեց, – պառավս խելքը թռցրել ա, սովից մեռնում ա, բայց ոչ հաց ու խորոված, ոչ տուն ու տեղ, ոչ էլ հարստություն ա ուզում:

– Իսկ ի՞նչ է ուզում, – զարմացավ հրաշք թռչունը:

– Խելքը թռցրած պառավս ինձ հանգստություն չի տալիս, – զանգատվեց ծերուկը:

– Ոչի՛նչ, ոչի՛նչ, բարի՛ պապիկ, մի՛ մտածիր, ասա՛ տեսնեմ, ի՞նչ է ուզում քո պառավը:

– Երիտասարդանալ ա ուզում, տասը տարվա իր երիտասարդությունն ա ուզում, – լացակումած ասաց ծերուկը:

– Բարի՛ պապիկ, – կրկին մարդկային լեզվով խոսեց ոսկեփետուր թռչնակը, – դժվար բան է, բայց քո խնդրանքը ինձ համար օրենք է, մի՛ տխրիր, համարիր, որ խնդրանքդ կատարված է: – Ասաց թռչունը, թևին տվեց, երեք անգամ պտտվեց ծերուկի գլխավերևում ու թռավ, անհետացավ կապուտակ երկնքում:

Գլուխը կախ ծերուկը ոտքերը քարշ տալով գնաց տուն և ո՛վ հրաշք իրոք պառավն անճանաչելի էր դարձել: Ձեռքերը քշտած, հաստ ոտքերը չռած, տաշտակը դրել էր դռանը, մինչև առաստաղը ելած կեղտոտ շորերը իստակ լվանում էր, փրփուրը տաշտակից դուրս էր թռչում նրա ամուր ձեռքերի տակից: Բուխարիկի վրա կրակը թեժ վառվում էր, կաթսայի մեջ ջուրը բլթբլթում: Սեղանին դրված խորոված կարտոֆիլի ու սոխի բուրմունքը բռնել էր ողջ շրջապատը: Կնիկը ծերունուն նստեցրեց սեղանի մոտ, առջևը դրեց մի աման տաք կերակուր և պատվիրեց ուտել: Ծերուկն ախորժակով իսկույն կուլ տվեց ջահելացած կնկա պատրաստած համեղ ուտելիքը: Անտառից էլ կնիկը հավաքել էր մոշ ու մորի, վայրի տանձ ու խնձոր, կիտել էր սեղանին: Քե՛ֆ արա, ինչքան կուզես, բայց ո՛չ... Երիտասարդացած կնիկը ձեռքերը դրեց կոնքերին ու է՛լ ավելի ուժգին գոռաց խեղճ ծերուկի վրա:

– Վաղն առավոտյան նորից կգնաս անտառ, – ասաց նա:

– Ինչի՞, – դողդողացող ձայնով կտրեց ծերուկը ջահելացած կնկա խոսքը:

– Ինձ մի հակաճառի, – ճչաց կնիկը, – կզնաս անտառ, կկանգնես ծառի տակ ու կկանչես էդ հիմար ոսկեփետուր թռչունին: Գլուխ տուր նրան ու ասա, որ...

– Ի՞նչ, – կմկմաց ծերուկը, – էլ ի՞նչ ես ուզում:

– Հետո, չոռ ու ցավ, – գոռաց երիտասարդացած կնիկը, – վաղը կասեմ:

Ու գնաց մտավ հին անկողինը, փաթաթվեց վերմակի մեջ ու տեղնուտեղը խռմփացրեց:

Առավոտ ծեփին կնիկը մի լավ ցնցեց խորը քնած ծերուկին ու թախտից վեր բերեց:

– Կե՛ր, քո բաժին խորոված կարտոֆիլն ու սոխը, սա էլ քեզ շատ ա ու զնա անտառ:

Ծերուկն արագ կերավ առավոտյան նախաճաշն ու հենց էնա ուզում էր փախչել-զնալ գյուղ, կնիկը կանգնեցրեց նրան.

– Կզնաս անտառ, անգետ հալևոր, – նորից կրկնեց կնիկը, – կկանգնես ծառի տակ, կկանչես էդ հիմար փետրավորին ու...

– Ու... ի՞նչ...

– Ու կասես նրան, – թնդաց երիտասարդացած կնիկը, – որ տասը տարին քիչ ա, ջահել աղջիկ եմ ուզում դառնալ:

– Ջահել աղջի՛կ, – գլուխը բռնեց ծերուկը, – ես ջահել աղջկա հետ ի՞նչ անեմ:

– Հա՛, ջահե՛լ աղջիկ, – գոռաց կնիկը, – քեզ ո՞վ կթողնի, թե ի՞նչ անես, հիմար հալևոր, վրադ ի՞նչ ուժ կա, – վերջում գոհ ձայնով ավելացրեց նա, – դե շուտ գնա ու մի լուր բեր, – ու կնիկը դուրս արեց խեղճ ծերուկին:

Ահա նա էլ գլխիկոր գնաց դեպի անտառ, գնաց ու հասավ էն ծառի մոտ, մոլորված կանգնեց, գլխարկը հանեց ու խզված ձայնով երեք անգամ կանչեց.

– Ծըլնգ-մըլնգ, իմ սիրուն թռչնակ, թռի-արի ինձ մոտ ու ինձ էս փորձանքից ազատիր:

Այս խոսքերի վրա, տեսավ պապիկը, որ ամպերը ծածկեցին երկինքը, ու բարձր ծառը քամուց սաստիկ սկսեց օրորվել:

– Պապիկ, բարի՛ պապիկ, էլ ո՞ր քամին է քեզ այստեղ բերել, – ծառի ճյուղին նստեց ոսկեփետուր թռչնակն ու խոսեց մարդկային լեզվով:

– Է՛հ, դարդերս շատ են, – գլխիկոր ասաց պապիկը, – տասը տարվա ջահելությունը քիչ է կնկաս համար: Նա ուզում է իսպառ ջահելանալ, դառնալ առաջվա կարմրաթուշ, թռվռան աղջիկը: Ինձ էլ հավան չի, բայց եթե ուզածը չկատարվի, ինձ տուն չի թողնի:

– Հանգի՛ստ եղիր, բարի՛ պապիկ, բարով՛ գնաս, – ասաց ոսկեփետուր թռչնակը, – քո խնդրանքը ինձ համար օրենք է, իմացի՛ր, որ արդեն կատարված է, – ասաց թռչնակն ու թռավ դեպի ամպամած երկինք:

Ծերուկը գլխին դրեց ճմրթված գլխարկը, նայեց մռլոտած ամպերին ու տխուր-տրտում բռնեց տան ճանապարհը: Չէր ուզում տուն հասնել, չէր ուզում, բայց ի՞նչ աներ, ուրիշ հնար չուներ. մտավ բակ և ի՞նչ տեսնի... Թռվռան, կարմրաթուշ, թևերն ամուր քշտած, մարմինը պիրկ մի սիրուն աղջիկ նստած է թախտին, կողքին էլ ջահել, ջիուկներ, մեկը՝ խնձոր է տալիս նրան, մյուսը՝ թուշն է պաչում, մեկելը լխտիկ թևերն է կմշտում: Աղջիկն էլ կչկչում է հիմար կաշաղակի պես ու ձենը բռնել է արար-աշխարհ:

– Թու՛, քո նամուսին, – զայրացած թքեց ծերուկն ու գլուխը կախ կանգնեց բակի անկյունում՝ իմանալու համար, թե հետո ի՞նչ է լինելու:

– Սրա՛ն մի տեսեք, – մատով ծերուկին ցույց տվեց ջահել տղերքից մեկը, – ի՞նչ ունի էստեղ, ի՞նչ է մոռացել ու կորցրել էս ջահել աղջկա մոտ:

– Դա խեղճ մուրացկան է, – ծիծաղեց աղջիկը, – մի կտոր հաց տվեք ու քշեք էստեղից:

Տղերքից մեկը հաց ու պանիր շարտեց ծերուկի երեսին ու դուրս արեց բակից: Հեռվից լսվում էր նրանց խրախճանքի ուրախ ծիծաղը և երգ ու պարի ձայները:

– Հե՛յ գիտի, ջահելություն, – տխուր-տրտում ասաց պապիկն ու նստեց քարին: Շուտով մթնեց, ու՞ր գնա, ու՞ր չգնա, դե իր տունն է, էլ ու՞ր գնա: Ստածեց-մտածեց ծերուկը և երերուն քայլերով գնաց դեպի իր խրճիթը: Դռան շեմին նրան դիմավորեց ջահել աղջիկ-կնիկն ու ասաց.

– Վաղը նորից կգնաս անտառ ու կկանչես եղ կկվին:

– Նա կկու չի, – վրդովվեց ծերուկը, – նա հրաշք թռչուն է:

– Կգնաս ու՛... – աչքերը ծերուկի վրա ուլորեց աղջիկը:

– Ու ի՞նչ, – զայրույթը զսպելով կրկնեց ծերուկը:

– Վաղը կասեմ, – հետո ծերուկին բոթեց ու հրեց դեպի քանդված գոմը, իսկ ինքը՝ ջահել-ջիվանների հետ պառկեց փափուկ անկողնում:

Վաղ առավոտյան աղջիկ-կնիկը ծերուկին դուրս բերեց գոմից, հաց ու պանիր և մի գավաթ կաթ տվեց, հետո էլ ապսպրեց.

– Կգնաս անտառ, կկանգնես էդ ծառի տակ ու կկանչես էդ փետրած հավին:

– Դա հավ չի, դա ոսկեփետուր մի սիրուն թռչնակ է, – լացակունած ասաց ծերուկը:

– Մի հակաճառի, – գոռաց աղջիկ-կնիկը, – կգնաս ու կասես՝ քիչ ա, քիչ, էլի եմ ուզում ջահելանալ, ինչքան արել ա, քիչ ա, ու քիչ... – այս խոսքերի վրա ծերուկին դուրս հրեց դեպի անտառ:

– Էլ ջահելանալու տեղ չկա՛, – մտածեց ծերուկը և ոտքերը քարշ տալով մտավ անտառ, կանգնեց ծառի տակ ու հուսահատ երեք անգամ կանչեց.

– Ծըլնգ-մըլնգ, իմ սիրուն թռչնակ, թռի-արի, փրկիր ինձ ես փորձանքից:

Ծերուկը նայեց դեպի երկինք, սև-սև ամպերը հավաքվեցին, կայծակ-որոտը բռնեց արար-աշխարհը, ծառը քամուց գնում էր ու գալիս, խփվում գետնին ու ետ բարձրանում, մութ ամպերը ճեղքելով եկավ ոսկեփետուր թռչնակը և մարդկային լեզվով նորից երգեց.

– Պապի՛կ, պապի՛կ, բարի՛ պապիկ, էլի որ՞ հոգսն է քեզ էստեղ բերել:

– Է՛հ, սիրուն թռչնակ, իմ ագահ կնիկը օր ու արև չի տալիս ինձ, ասում ա քիչ ա, քիչ ա, էլի եմ ուզում ջահելանալ: Ագահությունը սահման չունի: Եթե չկատարեմ նրա ասածը, ինձ տուն չի թողնի, ու՞ր գնամ, ու՞ր դնեմ իմ ծեր գլուխը:

– Պապի՛կ, պապի՛կ, քո խնդրանքն ինձ համար օրենք է, – երգեց կախարդական թռչունը, – բայց իմացի՛ր, քաշելիք ունես: Ասավ ու թռավ, մտավ ամպերի մեջ:

Ուլոր-մոլոր ճամփով քայլեց եղճ ծերուկը, անհամբեր սպասեց, որ մութն ընկնի, բայց ուրիշ տեղ չունեց, բացի իր խարխուլ տնակից, մտավ բակ և ո՞վ սարսափ՝ բարուրի մեջ մի ծծկեր երեխա, ձենով մեկ գոռում էր ու ծիծ էր ուզում:

Ծերուկը շշկված կանգնեց բարուրի մոտ ու դառնազին լացեց, հասկացավ, որ դա իր ազահ կնիկն է, որ փոքրացել է ու դարձել ծծկեր երեխա: Ի՞նչ աներ, ու՞ր դներ իր խեղճ գլուխը: Իսկ երեխան մի ձենի լացում էր ու կաթ էր պահանջում:

Պապիկը երեխային դրեց ապահով տեղ և ինչքան ուժ կար ոտքերում վազեց անտառ, կանգնեց ծանոթ ծառի տակ ու աղիողորմ ձայնով կանչեց ոսկեփետուր թռչնակին: Տեսավ, եղանակը խառնվել էր, փոթորիկ էր սկսվել: Քամին սուրալով փչում էր ու ծառերը տեղահան անում, ամպրոպը փայլատակում էր, որոտը թնդում: Պապիկի սպիտակ մազերը քշված ծածանվում էին օդում, բայց նա ոչինչ չէր զգում և սևեռուն հայացքով նայում էր դեպի երկինք: Եվ բնության այդ խառնակ պահին, կախարդական թռչունը կրկին թռավ ու եկավ՝ լսելով պապիկի աղերսող ձայնը: Պապիկը ձեռքերը բարձրացրեց ու ծնկների վրա իջնելով, բացականչեց հուսահատ.

– Սիրունիկ ոսկեփետուր թռչնակ, լսի՛ր, այս անգամ իմ միակ խնդրանքը: Ազահ կնիկս ստացել է իր արժանի պատիժը և հիմա բարուրի մեջ փաթաթված աղեկտուր լացում է: Ետ վերադարձրու ինձ փնթփնթան իմ կնկան: Ճակատագրից չես փախչի, ժամանակը առաջ է գնում, չես կարող կանգնեցնել: Թող ամեն ինչ լինի այնպես, ինչպես կար:

Ոսկեփետուր թռչնակը լուռ լսեց պապիկին և ոչինչ չպատասխանելով՝ թռավ-հեռացավ:

Պապիկը հոգնած ու հուսահատ վերադարձավ տուն և քիչ մնաց ուրախությունից ճչար: Իր փնթփնթան կնիկը նստած էր ծառի կոճղին ու դողդողացող մատներով ընտրում էր դաշտից հավաքած բանջարը, որպեսզի ճաշ պատրաստի: Տեսնելով ծար ամուսնուն՝ ուրախ ժպտաց և ձեռքերը պարզեց դեպի նա՝ իր ողջ կյանքի միակ ու անդավաճան ուղեկցին: Եվ այսպես ավարտվեց ազահ կնոջ երիտասարդանալու ողջ պատմությունը:

Երկնքից երեք խնձոր ընկավ, մեկը՝ պատմողին, մյուսը՝ լսողին, իսկ երրորդն էլ՝ կարդացողին: